# SUN Bucks 2025 թվականի համար

**Ի՞նչ է SUN Bucks-ը:**
SUN Bucks-ն ընտանիքներին տրամադրում է $120 յուրաքանչյուր իրավասու երեխայի համար Էլեկտրոնային նպաստների փոխանցման (EBT) քարտի միջոցով՝ ամռան ընթացքում մթերք գնելու համար, երբ դպրոցները փակ են: SUN Bucks քարտերն ընդունվում են այն վայրերում, որտեղ ընդունվում են CalFresh EBT քարտերը: **SUN Bucks ստանալը չի ազդում Ձեր ընտանիքի ներգաղթի կարգավիճակի վրա:**

## Ավտոմատիկ գրանցում SUN Bucks 2025-ի համար

CalFresh, CalWORKs և/կամ Medi-Cal ստացող երեխաները, որոնց եկամուտը կազմում է Դաշնային աղքատության մակարդակի (FPL) 185%-ը կամ ցածր, ավտոմատ կերպով կստանան SUN Bucks նպաստներ: Այն երեխաները, ովքեր իրավասու են որոշակի դպրոցներում անվճար կամ զեղչված գնով սնունդ ստանալու՝ հիմնված ընտանեկան եկամտի վրա, ապա նրանք նույնպես ավտոմատ կերպով կստանան SUN Bucks նպաստներ:

## Ինչպե՞ս ստանալ SUN Bucks

Եթե երեխան ավտոմատ կերպով չի ընդգրկվում SUN Bucks ծրագրում, նա պետք է դիմի իր դպրոցին կամ դպրոցի գլխավոր գրասենյակին **մինչև 2025 թվականի սեպտեմբերի 2-ը**՝ պարզելու համար, թե արդյոք նա իրավասու է ծրագրին մասնակցելու համար՝ հիմնվելով ընտանիքի չափի և եկամտի վրա:



- Երեխաները, ովքեր չեն ստանում հանրային օգնություն և հաճախում են Community Eligibility Provision կամ Provision 2 դպրոց, կամ ովքեր դպրոցական սնունդ են ստանում Կալիֆորնիայի համընդհանուր սննդի ծրագրի շրջանակներում, **պետք է** դիմեն: Անվճար դպրոցական սնունդ ստանալը չի երաշխավորում SUN Bucks-ում ընդգրկվելը:
- Medi-Cal ստացող երեխաներն ավտոմատ կերպով կստանան SUN Bucks միայն այն դեպքում, եթե նրանց ընտանիքի եկամուտը FPL-ի 185%-ից ցածր է կամ հավասար է: Սա նշանակում է, որ Medi-Cal ստացող որոշ երեխաներ ավտոմատ կերպով չեն ստանա SUN Bucks: Տարածված օրինակներից են Լրացուցիչ ապահովության եկամուտ կամ Որդեգրման աջակցություն ստացող երեխաները, քանի որ այդ ընտանիքները ստանում են Medi-Cal, որը չի համապատասխանում դաշնային աղքատության մակարդակի 185%-ին կամ ցածր մակարդակին:

## Կարևոր հիշեցումներ.

- **SUN Bucks-ի ժամկետը լրանում է քարտի վրա բեռնվելուց հետո 122 օրվա ընթացքում:** Ընտանիքներին խրախուսվում է ծախսել իրենց SUN Bucks-ի նպաստը CalFresh-ի նպաստից առաջ: Ստուգեք Ձեր նպաստի բալանսը www.ebtedge.com կայքում:
- **Թարմացրեք Ձեր կոնտակտային տվյալները** Ձեր երեխայի դպրոցում կամ դպրոցի գլխավոր գրասենյակում, Ձեր տեղական վարչաշրջանի սոցիալական ծառայությունների գրասենյակում կամ BenefitsCal.com կայքում:
- **SUN Bucks քարի հետ կապված որևէ խնդրի դեպքում՝ հայտնել SUN Bucks-ի Աջակցության բաժնին՝ (877) 328-9677 հեռախոսահամարով:** Ընտանիքը չի կարող ստանալ մեկից ավելի SUN Bucks քարտ մեկ երեխայի համար կամ ստանալ SUN Bucks մեկից ավելի նահանգներից:

**Ցանկանու՞մ եք ավելին իմանալ:**

- Այցելեք՝ www.cdss.ca.gov/SUNBucks.
- Դիտարկեք CDSS YouTube SUN Bucks Playlist-ը:
- Սկանավորեք արագ արձագանքման (QR) կոդը:

**SUN Bucks ծրագիրը Կալիֆորնիայում հնարավոր է դարձել ԱՄՆ Գյուղատնտեսության վարչության (USDA), Սննդի և սնուցման ծառայության (FNS) ֆինանսավորմամբ և իրականացվում է Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների վարչութան (CDSS) միջոցով՝ Կալիֆորնիայի Կրթության վարչության (CDE) հետ համատեղ:**
**www.cdss.ca.gov/sunbucks | www.cde.ca.gov/ls/nu/sf | SUNBucks@dss.ca.gov:**
**USDA-ն հավասար հնարավորություններ տրամադրող գործատու և վարկատու է: 2025**
(Armenian) **Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք՝ www.fns.usda.gov/summer:**